**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5**

ք. Գավառ «____» մարտի 2026թ.

Գավառի համայնքապետարանը, ի դեմս Գուրգեն Մարտիրոսյանի, որը գործում է ՏԻՄ ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուդիկ Կոստանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Գավառի թիվ 7 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մի մասնաշենքի ընթացիկ նորոգման/թերությունների վերացման/ աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 50 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 3 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնոթյունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

**5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 50724000 (հիսուն միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, որից 8454000 (ութ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |
| 2 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |
| 3 | Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |
| 4 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |
| 5 | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |
| 6 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Գավառի համայնքապետարան | «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ |
| 1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12 | գ. Նորատուս, Պ. Սևակի 13 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամիօբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ |
| Հ/Հ 900172000342 | Հ/Հ 11500452131221 |
| ՀՎՀՀ 08425757 | ՀՎՀՀ 08420332 |
| **Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________ | **Ռ. ԿՈՍՏԱՆՅԱՆ** __________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*«          » մարտի 2026թ.  կնքված*
*ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5 ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## «ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ/ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| h/h | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Գինը | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Ներքին հարդարում** | | | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ$^2$ | 11.38 | 16.99 | 193.29 |
| 2 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 10.00 | 0.60 | 5.99 |
| 3 | Տեղափոխում  8կմ | տն | 10.00 | 2.93 | 29.31 |
| | **Հատակներ** | | | | |
| 1 | Պրեսգրանիտե շրիշակների կառուցում  H=10սմ | 100գմ | 0.41 | 157.19 | 64.45 |
| 2 | Խճանկարե հատակի քայքայված հատվածների վերանորոգում | մ$^2$ | 48.81 | 2.35 | 114.73 |
| 3 | Խճանկարե հատակի հղկում փայլեցումով | 100 մ$^2$ | 0.49 | 189.97 | 92.72 |
| | **Հարդարման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի երեսապատում հախճասալերով 200*230մմ / Քայքայված հատվածների վերականգնում / | 100մ$^2$ | 0.15 | 827.50 | 124.13 |
| 2 | Պատերի  յուղաներկում /ծեփամածկումով h-0,9մ/ | 100մ$^2$ | 3.73 | 161.68 | 603.28 |
| 3 | Պատերի և շեպերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով /մածկապատումով/ | 100 մ$^2$ | 9.15 | 251.48 | 2300.62 |
| 4 | Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով /մածկապատումով/ | 100 մ$^2$ | 0.50 | 272.20 | 136.10 |
| | **Կախովի առաստաղ** | | | | |
| 1 | Կախովի առաստաղի իրականացում 9,5մմ գիպսակարտոնե սալերով ցինկապատ մետաղական պրոֆիլներով կարկասի վրա | մ2 | 50.00 | 7.98 | 399.15 |
| 2 | Կախովի առաստաղի իրականացում 600*600ՄՄ չափերի "արմսթրոնգ" սալերով ցինկապատ մետաղական պրոֆիլներով կարկասի վրա | մ2 | 687.65 | 10.33 | 7100.92 |
| 3 | Պլաստմասե կախովի առաստաղի պատրաստում  պրոֆիլներով կարկասի վրա | մ2 | 119.01 | 11.25 | 1338.98 |
| 4 | Կախովի  առաստաղի պատրաստման համար պրոֆիլի արժեքը G60մմ 0,5մմ | գմ | 3255.31 | 0.59 | 1933.73 |
| | **Ջեռուցում** | | | | |
| | **Ջեռուցման ներքին ցանց** | | | | |
| 1 | Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=20  d=25մմ  / փորձարկումով BITHERM / | գմ | 35.00 | 4.20 | 146.95 |
| 2 | Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=10  d=20մմ   / փորձարկումով BITHERM / | գմ | 5.00 | 4.69 | 23.47 |
| 3 | Մարտկոցի վերևի փական Φ15 | հատ | 4.00 | 6.34 | 25.34 |
| 4 | Մարտկոցի ներքևի փական Φ15 | հատ | 4.00 | 6.25 | 24.99 |
| 5 | Ալյումինե նոր մարտկոցների տեղադրում H = 500մմ, 0,12Կվտ | ԷԿՄ | 12.00 | 1.08 | 12.91 |
| 6 | Ալյումինե նոր մարտկոցների արժեք H = 500մմ, 0,12Կվտ , 756 հատ | հատ | 40.00 | 6.36 | 254.51 |
| 7 | Անցքերի բացում պատերում և փակում 0.15x0.15 | 100 տեղ | 0.02 | 397.56 | 7.95 |
| 8 | Ապամոնտաժված ալյումինե մարտկոցների տեղադրում | ԷԿՄ | 172.82 | 1.08 | 185.90 |
| 9 | Համակարգի հիդրավլիկ փորձարկում | 100մ | 0.40 | 12.67 | 5.07 |
| 10 | Խողովակի ամրակապում | հատ | 80.00 | 0.08 | 6.19 |
| 11 | Մարտկոցի մոնտաժային կոմպլեկտ | հատ | 4.00 | 1.86 | 7.43 |
| 12 | Խողովակի պոլիպրոպիլենե ձևավոր մասեր Φ20-Φ25 | հատ | 20.00 | 0.14 | 2.72 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Առկա ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում | հատ | 48.00 | 1.59 | 76.46 |
| 14 | **Օդափոխություն** | | | 0.00 | 0.00 |
| 15 | Օդատար 0,5մմ ցինկապատ թիթեղից 150մմ 20գմ | մ2 | 9.42 | 6.31 | 59.40 |
| 16 | Օդաքարշ հովանոցի տեղադրում խոհանոցում 0,5մմ ցինկապատ թիթեղից / 1,0*1,5գմ, երկու Φ150ելքով, ներառյալ ամրակապման դետալները/ | հատ | 1.00 | 85.97 | 85.97 |
| 17 | Օդափոխության ճաղաշար 150x300մմ | հատ | 30.00 | 5.32 | 159.57 |
| 18 | Կանալային օդափոխիչ Φ150 | հատ | 2.00 | 23.22 | 46.43 |
| | **Էլեկտրատեխնիկական մաս** | | | | |
| | **Էլեկտրական լուսավորություն** | | | | |
| 1 | Լուսավորության մուտքային վահանակի տեղադրում | լրակազմ | 2.0 | 17.61 | 35.23 |
| 2 | 16Ա միաֆազ ավտոմատ անջատիչ | հատ | 10.0 | 1.50 | 15.04 |
| 3 | 32Ա միաֆազ ավտոմատ անջատիչ | հատ | 10.0 | 1.50 | 15.04 |
| 4 | Առաստաղային լուսատուի տեղադրում Չևը քառակուսի / 595*595 մմ /լուսադիոդային 220Վ, 36Վտ, լուսային հոսքը 3318Լմ, լուսային արդյունավետությունը 95Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 4000K, լուսահաղորդման ինդեքսը 80 | հատ | 77 | 13.28 | 1022.62 |
| 5 | Առաստաղային լուսատուի տեղադրում լուսադիոդային 220Վ, 10Վտ,IP54, /ձևը կլոր Φ145մմ/ լուսային հոսքը 855Լմ, լուսային արդյունավետությունը 86Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 4000K, լուսահաղորդման ինդեքսը 80 / սանհանգույց / | հատ | 12 | 8.64 | 103.65 |
| 6 | Լուսատու էվակուացիոն , մարտկոցով, LED լամպով, 220Վ, 18Վտ «ԵԼՔ» նշանով | հատ | 4 | 14.05 | 56.22 |
| 7 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով , հատվածքը 3x4 մմ2 ВВГнг - LS | 100մ | 1.2 | 144.25 | 173.09 |
| 8 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով , հատվածքը 3x2,5 մմ2 ВВГнг - LS | 100մ | 1.2 | 107.78 | 129.33 |
| 9 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով , հատվածքը 3x1,5մմ2 ВВГнг - LS | 100մ | 2.5 | 81.73 | 204.33 |
| 10 | Պոլիվինիլքլորիդե խողովակ Φ32մմ | մ | 120.00 | 2.14 | 256.44 |
| 11 | Երկբևեռ խրոցակային վարդակ, հողանցման հպակով 220Վ10Ա, | հատ | 10.0 | 2.22 | 22.21 |
| 12 | Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար | 100հտ | 0.10 | 19.35 | 1.93 |
| 13 | Տուփ բաժանարար | 100հտ | 0.02 | 18.99 | 0.38 |
| 14 | Երկաթակապ | 100հտ | 2.00 | 0.76 | 1.52 |
| 15 | Ակոսների փորում 20*40 | 100մ | 1.00 | 19.62 | 19.62 |
| 16 | Ակոսագծերի գաջի սվաղում | 100մ$^2$ | 0.04 | 81.98 | 3.28 |
| 17 | Խոհանոցում սալօջախի տեղադրում ЭП-6ЖШ-01 տիպի կամ այլ տեսակի համարժեք գնի և որակի | հատ | 1.00 | 1149.50 | 1149.50 |
| | **Ապամոնտաժման աշխատանքներ** | | | | |
| 1 | Գոյություն ունեցող լուսատուների ապամոնտաժում և հանձնում պատվիրատուին | հատ | 12.000 | 1.28 | 15.42 |
| | **Հրդեհային ազդանշանում և պահպանության համակարգ** | | | | |
| | **Հրդեհային ազդանշանում** | | | | |
| 1 | Համակարգի կառավարման հսկման գլխավոր վահանակ C2000M | հատ | 1.00 | 203.00 | 203.00 |
| 2 | Ինտերֆեյսային ձևափոխիչ C2000-PI | հատ | 1.00 | 43.34 | 43.34 |
| 3 | Տեղեկատվական վահանակ / Վահանակի ղեկավարման ստեղնաշար / C2000 BKI SMD | հատ | 2.00 | 51.85 | 103.70 |
| 4 | Մալուխ հատվածքը UTP CAT 5e | մ | 20.00 | 1.44 | 28.76 |
| 5 | Պահուստային սնուցման աղբյուր 12V, 3A РИП 12 | հատ | 3.00 | 55.06 | 165.17 |
| 6 | Մարտկոց DTM 1207 | հատ | 3.00 | 10.84 | 32.52 |
| 7 | Երկլարանի գծի վերահսկիչ C2000-KDL | հատ | 1.00 | 40.63 | 40.63 |
| 8 | Հասցեային ռելային մոդուլ C2000-KPB | հատ | 1.00 | 41.17 | 41.17 |
| 9 | Հասցեային ռելային մոդուլ C2000-SP1 | հատ | 1.00 | 33.12 | 33.12 |
| 10 | Հասցեային ընդարձակիչ C2000-AP2 | հատ | 1.00 | 10.31 | 10.31 |
| 11 | Ծրագրային ապահովում | հատ | 1.00 | 40.63 | 40.63 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Հրդեհային ձեռքի ազդասարք IPR - 513- 3AM | հատ | 9.00 | 13.09 | 117.84 |
| 13 | Ջերմային տվիչ ДИП 34А | հատ | 2.00 | 10.13 | 20.26 |
| 14 | Ջերմային տվիչ ИП 103/4 | հատ | 12.00 | 8.38 | 100.57 |
| 15 | Ծխային տվիչ IPR 212 -45 | հատ | 44.00 | 6.80 | 299.33 |
| 16 | Լուսաձայնային շչակ OPOP 124-7 | հատ | 5.00 | 19.92 | 99.62 |
| 17 | Մալուխ , պղնձե ջիղով, մեկուսացված հատվածքը , հրակայուն 1x2,0x0,8 КПС нг(А) - FRLS | մ | 700.00 | 0.69 | 480.99 |
| 18 | Մալուխ , պղնձե ջիղով, մեկուսացված հատվածքը , հրակայուն 4x0,75 КПС нг(А) - FRLS | մ | 150.00 | 1.03 | 154.69 |
| 19 | Մալուխ , պղնձե ջիղով, մեկուսացված հատվածքը 3x2,5 ВРГнг - FRLS | մ | 30.00 | 0.67 | 20.05 |
| 20 | Ամրակապման ճարմանդ | 100հտ | 22.50 | 1.55 | 34.82 |
| 21 | Պոլիեթիլենային գոֆրե խողովակի տեղ. Φ =20մմ | 100մ | 9.0 | 19.35 | 174.12 |
| 22 | Մետաղական ճոպան Φ3մմ | 100մ | 0.72 | 19.35 | 13.93 |
| 23 | Անցքերի շաղափում միջնորմների մեջ մինչև 25սմ | 100 հատ | 0.20 | 42.74 | 8.55 |
| 24 | Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 60սմ | 100 հատ | 0.10 | 97.55 | 9.76 |
| 25 | Անցքերի բացում միջհարկային ծածկերում | 100 տեղ | 0.03 | 196.43 | 5.89 |
| | **Ջրագծի ներքին տեղամաս** | | | | |
| 1 | Հակահրդեհային ծորակի տեղադրում d=50 մմ | հատ | 2.0 | 26.97 | 53.94 |
| 2 | Վուշե ճկափող DN 50, L=15մ / ծայրակալով և կցորդման գլխիկով / | հատ | 2.0 | 18.57 | 37.15 |
| 3 | Հակահրդեհային ծորակի մետաղական պահարան | հատ | 2.0 | 23.22 | 46.43 |
| 4 | Ոչ ստացիոնար տեղակայված խառնարանով ցնցուղի տեղադրում | հատ | 1.0 | 10.35 | 10.35 |
| 5 | Լվացարանի խառնարանով ծորակի տեղ. | հատ | 8.0 | 14.59 | 116.71 |
| | **Կոյուղագծի ներքին տեղամաս** | | | | |
| 1 | Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=50մմ ներառյալ ձևավոր մասերի տեղադրումը և փորձարկումը | մ | 20.00 | 1.69 | 33.88 |
| 2 | Խեցե լվացարանի տեղադրում, սիֆոնով, թողարկով և ճկուն խողովակով | կ-տ | 1.00 | 63.23 | 63.23 |
| 3 | Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասերի արժեք d=50մմ | հտ | 6.00 | 1.47 | 8.82 |
| | **Տարածքի բարեկարգում** | | | | |
| | **Եզրաքարերի տեղադրում և սալիկապատում** | | | | |
| 1 | Հիմնատակի բնահողի մշակում 0,25մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոինքնաթափ / միջինը 25սմ / | 100մ3 | 0.62 | 112.23 | 69.58 |
| 2 | Տեղափոխում 5 կմ լցակույտ | տն | 99.2 | 2.04 | 201.89 |
| 3 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 100*200 Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա | 100մ | 0.4800 | 912.72 | 438.11 |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 150*300 Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա | 100մ | 1.120 | 1324.34 | 1483.26 |
| 5 | Ավազի հիմնատակի իրականացում 60մմ | մ$^3$ | 14.88 | 4.63 | 68.95 |
| 6 | Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը մոխրագույն «հին քաղաք» տեսակի. կամ համարժեք այլ տեսակի 5սմ/ | 100մ$^2$ | 1.240 | 766.93 | 950.99 |
| 7 | Բետոնե սալիկներով հարթակի իրականացում / երկրորդ շերտը գունավոր «հին քաղաք» տեսակի. կամ համարժեք այլ տեսակի 5սմ/ | 100մ$^2$ | 1.240 | 831.93 | 1031.60 |
| | **Խաղահրապարակի սարքավորումներ** | | | | |
| 1 | Ավազահարթակի տեղադրում<br>Չափս (մ) : 2.4 x 3.3 x 2.4/ ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 2.00 | 532.59 | 1065.18 |
| 2 | Չապանակով ճոճանակ 2-ի տեղադրում<br>Չափս (մ) : 2.6 x 0.8 x 0.4/ ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 4.00 | 230.08 | 920.31 |
| 3 | Շղթաներով փոքր ճոճանակի տեղադրում<br>Չափս (մ) : 2.5 x 1.8 x 0.5/ ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 4.00 | 267.58 | 1070.33 |
| 4 | Մեծ սահարանի տեղադրում<br>Չափս (մ) : 7 x 3 x 1.2 / ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 2.00 | 1330.22 | 2660.45 |
| 5 | Սահարանի տեղադրում<br>Չափս (մ) : 3.6 x 2.4 x 0.7 / ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 1.00 | 456.52 | 456.52 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Փոքր Տարզան խաղասարքի տեղադրում<br>Չափս (մ) : 2.9 x 3 x 1.9 / ՛՛ՄԱԳՆՈՆ՛՛ արտադրության, կամ այլ տեսակի համարժեք որակի / | հատ | 1.00 | 540.29 | 540.29 |
| | **Խաղադաշտի կառուցում** | | | | |
| 1 | Խաղադաշտի հիմնատակի բնահողի մշակում 0,25մ3 տարողությամբ էքսկավատորով, բեռնելով ավտոինքնաթափ / միջինը 15սմ / | 100մ3 | 0.30 | 112.23 | 33.67 |
| 2 | Տեղափոխում 5 կմ լցակույտ | տն | 48.0 | 2.04 | 97.69 |
| 3 | Խաղադաշտի անհարթությունների ուղղում մեխանիզմով | 100մ2 | 2.00 | 26.87 | 53.74 |
| 4 | Խճային հիմքի կառուցում 12,0 սմ հաստությամբ բազալտե 40-70 խճով և 10-20 բազալտե մանրախճով | 100մ$^2$ | 2.000 | 145.71 | 291.43 |
| 5 | Բետոնե հիմնատակի կառուցում B-12,5 դասի ծանր բետոնով, h-100մմ | մ$^2$ | 200.000 | 5.42 | 1084.20 |
| 6 | Բետոնե շերտի ամրանավորում / ներառյալ եզրաքարերը / Bp=5մմ բջիջը 200*200մմ ամրանային ցանցով | տն | 0.31 | 28.18 | 8.68 |
| 7 | Bp=5մմ բջիջը 200*200մմ ամրանային ցանցի արժեք | 100մ$^2$ | 2.00 | 93.14 | 186.29 |
| 8 | Բետոնի հղկում | 100մ$^2$ | 2.00 | 178.39 | 356.77 |
| 9 | Դեֆորմացիոն կարերի կտրում / ք.2000 / | 100գմ | 2.00 | 45.51 | 91.02 |
| 10 | Սպորտային, ռետինե, գունավոր հատակի կառուցում 1000*1000*20մմ չափերի ամրանավորված հատավոր մատերից / գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ / | 100մ$^2$ | 2.0000 | 3358.61 | 6717.21 |
| | **Մետաղական կարկասով զրուցարանների կառուցում / երկու հատ /** | | | | |
| 1 | Բնահողի մշակում ձեռքով / հիմքերի փոսորակներ / | մ$^3$ | 3.42 | 3.66 | 12.51 |
| 2 | Հենասյուների հիմքերի իրականացում բուտաբետոնից Բ-12.5 դասի բետոնից | մ3 | 2.4480 | 41.43 | 101.43 |
| 3 | Ավելացած գրունտի հետլիցք և հարթեցում տեղում | մ3 | 3.42 | 5.32 | 18.20 |
| 4 | Մետաղական կարկասի կառուցում | տն | 0.002 | 346.49 | 0.69 |
| 5 | Քառակուսի խողովակ 80*80*2 | մ | 27.60 | 2.29 | 63.22 |
| 6 | Ուղղանկյունաձև խողովակ 80*40*2 | մ | 85.20 | 1.64 | 139.78 |
| 7 | Քառակուսի խողովակ 40*40*2 | մ | 22.16 | 1.08 | 24.01 |
| 8 | Ուղղանկյունաձև խողովակ 40*20*2 | մ | 143.50 | 0.82 | 117.71 |
| 9 | Քառակուսի խողովակ 20*20*2 | մ | 72.64 | 0.53 | 38.23 |
| 10 | Պողպատյա խողովակ Ф32*3մմ | մ | 12.80 | 1.80 | 23.10 |
| 11 | Պողպատյա ծնկալ Ф32 | հատ | 8.00 | 0.54 | 4.32 |
| 12 | Նստարանների փայտյա ուղիղ հատվածների տեղադրում, /հաճարի փայտից ռանդած չորսու 50*50 մմ/ | մ | 25.00 | 2.08 | 52.10 |
| 13 | Նոր տեղադրված փայտյա նստատեղերի յուղաներկում և լաքապատում | 100 մ$^2$ | 0.05 | 236.64 | 11.83 |
| 14 | Տանիքի ծածկի կառուցում պրոֆիլավոր ներկված ԿՊ-21-0,5մմ ցինկապատ թիթեղով | 100 մ$^2$ | 0.340 | 824.70 | 280.40 |
| 15 | Գազաքնազծեր իրականացում 0,5 մմ ցինկապատ ներկած թիթեղից | 100մ$^2$ | 0.0726 | 622.52 | 45.19 |
| 16 | Մետաղական էլեմենտների երկտակ յուղաներկում | 100 մ$^2$ | 0.048 | 175.84 | 8.44 |
| 17 | Զրուցարաններում կարմիր լվացված խարամի շերտ 150մմ | մ$^3$ | 3.14 | 2.79 | 8.75 |

Ընդամենը 42274.83

ԱԱՀ 20% 8454.97

Ընդամենը 50729.80

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172000342
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ֆավորիտ-Մ» ՍՊԸ
գ.Նորատուս, Պ.Սևակի 13
«Ամիօբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500452131221
ՀՎՀՀ 08420332

**Ռ.ԿՈՍՏԱՆՅԱՆ** __________________
/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված N 1.1*
*«          » մարտի 2026թ. կնքված*
*ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5 ծածկագրով պայմանագրի*

**«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ/ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

**Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրեր և երաշխիքային ժամկետներ**

«Ֆավորիտ-Մ» ՍՊԸ-ն հավաստում է, որ **ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5** ծածկագրով Գնանշման հարցման շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| Գավառի համայնքապետարան<br>1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900172000342<br>ՀՎՀՀ 08425757 | «Ֆավորիտ-Մ» ՍՊԸ<br>գ.Նորատուս, Պ.Սևակի 13<br>«Ամիոբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ<br>Հ/Հ 11500452131221<br>ՀՎՀՀ 08420332 |
| **Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** _______________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | **Ռ.ԿՈՍՏԱՆՅԱՆ** _________________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 2*
*«          » մարտի 2026թ.  կնքված*
*ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5 ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ***
**«ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ/ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | **Սկիզբը** | **Ավարտը** |
| 1 | «Գավառի թիվ 7 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մի մասնաշենքի ընթացիկ նորոգման/թերությունների վերացման/ աշխատանքներ | ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման օրվանից | 50 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան 15.05.2026 թվականը |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման օրվանից | 50 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան 15.05.2026 թվականը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172000342
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ֆավորիտ-Մ» ՍՊԸ
գ.Նորատուս, Պ.Սևակի 13
«Ամիօբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500452131221
ՀՎՀՀ 08420332

**Ռ.ԿՈՍՏԱՆՅԱՆ** ________________
/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված N 3*
*«           » մարտի 2026թ.  կնքված*
*ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-26/5 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45211228/501 | «Գավառի թիվ 7 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մի մասնաշենքի ընթացիկ նորոգման/թերությունների վերացման/ աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | **... %** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Գավառի համայնքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900172000342
ՀՎՀՀ 08425757

**Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ** ________________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ֆավորիտ-Մ» ՍՊԸ
գ.Նորատուս, Պ.Սևակի 13
«Ամիօբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500452131221
ՀՎՀՀ 08420332

**Ռ.ԿՈՍՏԱՆՅԱՆ** __________________
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ___________________________ | _____________________________ |
| ___________________________ | _____________________________ |
| գտնվելու վայրը _____________ | գտնվելու վայրը ________________ |
| հհ _________________________ | հհ___________________________ |
| հվհհ _______________________ | հվհհ__________________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց　　　　　　Աշխատանքը ընդունեց

| | |
|---|---|
| ________________________________ | ________________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________________________ | ________________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«        »        20   թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________________-ի
Պատվիրատուի անունը   Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20   թ. __________________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը   պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| | |
|---|---|
| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| ________________________________ | ________________________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ________________________________ | ________________________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

*Հավելված N 5*
*«          »             20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. __________________________-ի և ______________________-ի միջև «--»     20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ___________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_______________________________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»       20  թ.